

աշխարհիս, ի ձեռն առն միոջ եցոյց զսքանչելիս¹ մեծամեծս, որ ²համբերութեամբ ³բազում եւ ազգի ազգի փորձութեանց եւ կապանաւոր վշտաց մենակոյիւ մենամարտիկ երկպատական բռնութեան⁴ յԱրտաշատ քաղաքի վասն Քրիստոսի յաղթութեամբ տարեալ, ⁵որոյ զվկայ անուն ժառանգեալ⁶, որ ի մահ⁷ հասեալ ⁸մտեալ, եւ կամաւքն Աստուծոյ այսրէն դարձեալ՝ ի վերակացութիւն դառնայր⁹ յերկիրս Հայոց¹⁰: 33 Սա¹¹ մտեալ ի դրունս մահու՝ դարձեալ անտի¹² կամաւքն Աստուծոյ, վարդապետութեանն Քրիստոսի պատգամաւոր գտեալ, յետ Աստուծոյ սքանչելագործ պատուհասին մարդասիրութեան¹³: 34 Իսկ բարեացապարտն¹⁴ Տրդատ յանկարծակամ¹⁵ կենացն ասպնջական¹⁶ ցանկալի ամենեցուն¹⁷ լինէր, որ աշխարհածունդ¹⁸ հայրենեացն¹⁹ ²⁰որդի գտանէր շնորհաւքն ²¹Աստուծոյ, եւ յաւիտենական կենացն մերձաւոր լինէր:

35 Եւ արդ՝ քանզի ըստ աւրինակի գրելոցս²² առ ի մենջ՝ ոչ եթէ ի հին ²³համբաւուց տեղեկացեալք մատենագրել ²⁴զայս կարգաւ, այլ որոց²⁵ մեզէն իսկ եղեալ²⁶ ականատես կերպարանաց եւ առնթերակաց¹ հոգեւորական

1 ac սքանչելիս

2 abc համբերութեամբ բազում եւ ազգի ազգի / t բազում համբերութեամբ ազգի ազգի

3 Կորինս՝ բազում եւ ազգի ազգի

4 t առնութեան / p բռնութեան / abc Կ բռնութեանն

5 ac որ եւ վկա անուն / b որում

6 abc ժառանգեաց

7 b ի մահն

8 abc չիք մտեալ եւ

9 ac չիք դառնայր

10 ac երկրիս հաց

11 abc որ, փիւ. սա

12 b անդէն, փիւ. անտի

13 b մարդասիրութեանն

14 b բարեաց պարտն

15 Կորինս՝ յանկարծահաս. Հայկ. բառգ. յանկարծական

16 b չիք ասպնջական

17 t ամենեցունցն

18 t աշխարհածունդ

19 t հայրենեաց

20 ac որդի. չիք գտանէր

21 ac Աստուծոյ, եւ յաւիտենական կենացն մերձաւոր լինէր / bt Աստուծոյ, մերձաւոր կենաց [b կենացն] վայելէր

22 a գրելոյս / c գրելոյ

23 b համբաւուց ինչ տեղեկացեալ զայս կարգեալ, այլ որոց մեզէն

24 t չիք զայս կարգաւ

25 t չիք որոց

26 bt չիք եղեալ